ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/251

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.08.2021թ. թիվ 26/26-1/13786-2021 գրությամբ Ա/Ձ Դավիթ Բահարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.08.2021թ. թիվ ՊՆ//4426-2021 գրության հիման վրա 30.08.2021թ. թիվ 26/26-1/13786-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Դավիթ Բահարյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Դավիթ Բահարյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Դավիթ Բահարյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Դավիթ Բահարյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/251 ընթացակարգի շրջանակներում 02.09.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.08.2021թ. թիվ ՊՆ//4426-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-23/4» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Դավիթ Բահարյան» Ա/Ձ-ն:

Մասնակիցը 18.08.2021թ. ներկայացրել է դիմում, ըստ որի, հանդիսանալով Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից, հրաժարվել է նույն չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց:

Քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն.

«Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց», ուստի 19.08.2021թ., հիմք ընդունելով Մասնակցի կողմից 18.08.2021թ. ներկայացված դիմումը և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Մասնակցի հայտը Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով:

Կից ներկայացվում է Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/251 ընթացակարգի շրջանակներում 02.09.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2021/251 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2021/251 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-23/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել Ա/Ձ Դավիթ Բահարյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 09.08.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ա/Ձ Դավիթ Բահարյանին Ընթացակարգի 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Դավիթ Բահարյանը 18.08.2021թ. ներկայացրել է դիմում, համաձայն որի հանդիսանալով ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից, հրաժարվել է նույն չափաբաժնի մասով ընթացակարգին հետագա մասնակցությունից և պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել Ա/Ձ Դավիթ Բահարյանի հայտը 7-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ:

4. Ա/Ձ Դավիթ Բահարյանը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Նախկինում իմ կողմից ուղարկված գրությունը ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-23/4 ծածկագրով գնանշման հարցման 7-րդ չափաբաժնի սխալ գնային առաջարկ ներկայացնելու պատճառով հայտը տվյալ չափաբաժնի մասով մերժելու խնդրանքով, չբավարարելու պատճառով, ինձ ներկայացված պայմանագիրը չեմ կարող կնքել, որովհետև տվյալ պայմանագրում առկա է 7-րդ չափաբաժինը»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.08.2021թ. թիվ 26/26-1/13786-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.08.2021թ. թիվ ՊՆ//4426-2021 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-23/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել Ա/Ձ Դավիթ Բահարյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 09.08.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից

որոշում է կայացվել Ա/Ձ Դավիթ Բահարյանին Ընթացակարգի 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Դավիթ Բահարյանը 18.08.2021թ. ներկայացրել է դիմում, համաձայն որի հանդիսանալով ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից, հրաժարվել է նույն չափաբաժնի մասով ընթացակարգին հետագա մասնակցությունից և պայմանագիր կնքելուց և որոշում կայացրել Ա/Ձ Դավիթ Բահարյանի հայտը 7-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ:

Ա/Ձ Դավիթ Բահարյանը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Նախկինում իմ կողմից ուղարկված գրությունը ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-23/4 ծածկագրով գնանշման հարցման 7-րդ չափաբաժնի սխալ գնային առաջարկ ներկայացնելու պատճառով հայտը տվյալ չափաբաժնի մասով մերժելու խնդրանքով, չբավարարելու պատճառով, ինձ ներկայացված պայմանագիրը չեմ կարող կնքել, որովհետև տվյալ պայմանագրում առկա է 7-րդ չափաբաժինը»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Դավիթ Բահարյանը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո, Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.08.2021թ. թիվ 26/26-1/13786-2021 գրությամբ Ա/Ձ Դավիթ Բահարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Դավիթ Բահարյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**